

# ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԳԻՒՂԵՐԸ ԵՏ Կ'ԱՌՆՈՒԻՆ

Հայկական ինքնապաշտպանութեան ուժերը, որոնք օրերէ ի վեր կը շարունակէին դիրքային կռիւները Մարտակերտի շրջանը, Մաղաուղէն ետք, վերադրուած են նաեւ Յակոբ Կամարի, Մինդրեւակ դիւղերը: Առաջին տուեալներով, հայկական Վոզմը միայն 2 մեռեալ եւ 6 վիրաւոր ունէր, բայց հաշուեկշիռը վերջնական չէր եւ վախ կար որ դոճերու թիւը աւելի մեծ ըլլայ: Հակառակորդները շատ աւելի ծանր վորուստներ ունին:

Գնդակոծումները չեն դադարիր Կապանի շրջանը, ուր ամէն օր արկեր կը տեղան Եղուարդ, Ուժանիս, Սրաչէն, Գեղանոյշ դիւղերուն վրայ: Զոհ չկայ:

Արարատի շրջանն ալ կացութիւնը նոյնն է եւ Սեւակաւան, Արմաշ, Երասխաւանի վրայ թնդանօթային հրաձգութիւնը կը շարունակուի: Մէկ բնակիչ որ տունը հանդիստ նստած էր արկ մը ստացած է ու տեղն ու տեղը մեռած: Վեց վիրաւոր կայ:

Ծանր է վիճակը Եղեգնաձորի Խաչիկ դիւղը, որ այլեւս պարսպուած է իր բնակիչներէն:

Այս ամբողջին հետեւանքն այն է որ դիւղատնտեսութիւնը դադրած է, մեծ վնաս պատճառելով:

\*\*

Զորեքշարթի, Յուլիս 29-ին, կը շարունակուէր Գերադոյն Խորհուրդի արտակարգ նիստը, որու այժմու օրակարգն է սեփականաշնորհման օրինագիծը:

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈՍՆԻԱ -- ՀԵՐՉԵԿՈՎԻՆԻ գաղթականներու վիճակը ահաւոր է եւ Գերմանիա կոչ ըրաւ որ եւրոպական այլ երկիրներ օգնեն իրեն: Արդարեւ Գերմանիա արդէն 200 հազար գաղթականի ապաստան տուած է, բայց, չի կրնար շարունակել: 1945-էն ի վեր Պոսնիաքներու եւ Խրուաթներու գաղթը (2.5 միլիոն) ծանրակշիռն է Եւրոպայի:

ՍՈՄԱԼԻԻ վիճակն ալ շատ ծանր է: Պատերազմ ու սով աւեր կը գործեն եւ ՄԱԿ-ը որոշեց օգնութեան փութալ: Պութրոս Ղալի առաջարկեց որ անմիջապէս պատուիրակութիւն մը մեկնի, որ քննէ կացութիւնը եւ միջոցներ գտնէ վերջ դնելու համար քաղաքացիական պատերազմին:

ՄԱՖԻԱՆ կը շարունակէ ասպարէզ կարգալ եւ մինչ 7000 գինուոր կը դրկուէր Սիկիլիա, սպաննեց հակամաքիա մէկ ծանօթ ոստիկան մը՝ Ճիովաննի Լիժիօ, Քաթանէ, որ բերդերէն մէկն է մաքրային: Ոչ ոք այլեւս մեծ յոյսեր ունի եւ քննիչ ոստիկաններն ալ կը խոստովանին որ դրամն է մեծ յանցաւորը, ոչ ոք կը դիմանայ անոր: Անոնք որոնք հաւատքով կը փորձեն պայքարիլ, շուտով կը յուսահատին, ինչպէս 18 տարեկան աղջնակ մը, որ տեղեկութիւններ հաղորդած էր դատաւոր Պորսելլինոյի եւ որ անձնատուան եղած է, քանի մը տող ձգելով... «Այլեւս ոչ ոք կայ դիս պաշտպանելու համար, Չեմ դիմանար...»: